

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- ՊՐՈՖ. Լ. ԿԵՐԵՆՅԱՆ. - Էլմիսիոնի բուն բարեկեն-
դանը 1655 թուականին (շար.) 157
- ՀԱՅԳ ՊԵՐՊԵՐՅԱՆ. - Պ. Յ. ՔԻՆՏԵՆՆԻ «բանա-
սիրական գիտություն» 167

ԳՐԱԿԱՆ

- Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. — Աւետիս Ահարոնեան (գերջ). 149
- Թ. Ա. ՀՐԱԶԴԱՆ. — Մասիններուն . . . 159
- ԻՍԿԱԽԻՒՄԻ ՄԻՆԱՍԵԱՆ. — Առ Պալլաս Աթենք . 166
- ՄԱՌԻ ԱՅՄԱՃԵԱՆ. — Նոր աղօթք . . . 171
- ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ. — Աթերիկահայ զրոյ՝ Աւետիս
Տէրունեան 177

ԳԵՂԱՐՈՒԽԵՍՏ

- ԱՐԱՐ ԵՐԵՄԻԱՆ. - Փայտափրազրիչ-գծազրիչ
Բարսեղ Զօհրաբեան 162
- ՃԱՐՏ. Ս. ՃԵՎԱՆԻԻՃԵԱՆ. - Հայկական ճարտա-
րապետության մէջ ներդաշնակութեան կա-
նոններու պրպտումի փորձեր (շար.) . . . 172

ԱՅԼԵՒԱՅԼՔ

- | | | |
|-------|--|-----|
| — | Արժադանգ հայ մամուլի « Բազմավէպ »ի
յորեկանին առթիւ (շար.) | 180 |
| — | Շնորհաւորութիւններ և զնահատականներ | 183 |
| — | Հանդէսներ « Բազմավէպ »ի հարիւրամեա-
կին առթիւ (Հաւէպ — Պէյրուք — Միւլան). | 184 |
| Գ. Բ. | ՊՅՂԱՐԵԱՆ. — « Բազմավէպ »ի 100—ամեակը
(բանախօսութիւն) | 187 |

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ,

- Հ. Վ. Թ. - «Մոլոն երգը». - գրեց՝ Վարդան
Գէորգեան, Պուխտու Այբէս 1947 . . 194
- ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ. - «Աշուղ Յարթուն Օղլի».
- գրեց՝ Արամ Էրեմեան, Թէհրան, 1946. 195
- Հ. Ն. Տ. - Գովա. Արտաշէս Արեղեանի երկու նոր
հրատարակութիւնները . . . 196

PHILOLOGIE

- Prof. L. Gurékian.* - Le Carême à Etchmiadzine en 1655 (suite) . . . 157
- Haïg. Bérbérian.* - L'érudition philologique du Mr. H. Kurdian . . . 167

LITTÉRATURE

- | | |
|--|-----|
| <i>P. Mesrob Djanachian.</i> - Avédis Aharonian | |
| (fin) | 149 |
| <i>T. A. Hraztan.</i> - Aux « Masis » | 159 |
| <i>I. Minassian.</i> - A Pallas-Athéné | 166 |
| <i>Marie Atmadjian</i> - Nouvelle prière | 171 |
| <i>Hagop Kouyoumdjian.</i> - Avédis Dérounian,
écrivain arménien d'Amérique | 177 |

BEAUX ARTS


- A. Yérémián.* — Barsegh Zohrabian, Graveur-dessinateur arménien . . . 162
- Ing. S. Djévahir.* — Essai sur les règles d'harmonie dans l'architecture arménienne (suite) . . . 172

DIVERS

- Echo de la presse arménienne à l'occasion du 1er Centenaire de la Revue « Pazmaveb » (suite) 180
 - Félicitations et appréciations pour le Centenaire de « Pazmaveb » 183
 - Célébrations du Centenaire de « Pazmaveb » (Alep - Beyrouth - Milan). 184
- G. Bogharian* - Le Centenaire de Pazmaveb » (conférence) 187

RECENSION

- P. V. H.* - « Le chant de la mer » par Vartan Kévorkian, Buenos Aires 1947 . 194
- Vartan Minassian.* - « Le tronvère Hartoun ogli » par Aram Yérémanian, Tehran, 1946 195
- P. N. D.* - Les dernières publications du Dr. Artachès Abeghian 196



ԱՒԵՏԻՍ Ա. ՀԱՐՈՆԵԱՆ

(*Comp. Phil.* 5-6, t. 132)

Ահաբանեալի զըստական տրուեստին յառ-
կանիշը ցոյց տալ վերլուծութեամբ
խորքին ու ձևին՝ իրմէ մեզի ժողովանդ մնա-
ցած զբաղանութեան, ըսել է նկատել իր
մէջ վիպագիրը, բանաստեղծը, հոգեբան
գիտողը և գաղափարախօսը։ Այս տեսա-
կէաները որ մենք կը բաժնենք, անտն-
ջատելի ամբողջութիւն կը կազմեն անոր
քով և կը ներկայացնեն մարդն ու զբա-
ղէտը իր արտեստի ըմբռնութեամբ և գա-
ղափարախօսութեամբ։

Վլադպրոցը և պատմոցը Ահարոնեանի մէջ անգրագարքումն է ոչ թէ Րաֆֆիական և ևս պատմական վէպի զգրոցին, այլ Արտվանական ուղղութեան և ևս առանձն յիշ զգրոցին: Արտվանին մէջ սիրտն էր որ կը խօսէր, իր էջերը բնական յորոր կը խօսէր, իր էջերը բնական յորզագեղ ժայթքումներ էին, յազիչ ու տարապայտն կերպով հազարական: Այդ տարապայտն կերպով հազարականը կը զանենք միևեռոյն ռճն ու արուեստը կը զանենք Ահարոնեանի բով, որ զօրաւոր է նմա: Նապէս սրտի ձայնը, յուզականութիւնը, որ իսկական յատկանիշը կը կազմէ իր

գործերուն: Ան կը տարուի երեւակայութենէ ու զգացումէ, չի փնտռեր պատմական տուեալներ, մանրամասնութիւններ. իր նպատակն է յուզել, խօսեցնել մարդկային սիրտը. որով կը մնայ ճիշտ ու մանթիւր զպրոցի սահմանին ու պայմաններուն մէջ: Նկատեցէ՛ք մի միայն իր Սեօրէի վիպակը, որ կրնայ բլաւ այդ ու մանթիւր զգայնութեան ճիշտ օրինակը. տիւրութիւն, ճակատագրականութիւն, մահերու աճաւոր ու ցնցիչ յաջորդութիւններ սիրոյ համար ու սիրոյ պատճառով՝ լաւ բուած անլուծելի կնճիռներով. ամբողջ գիւղ մը զոհ, տնարանդ ու վերածուած աւերակոյտի ...:

Ա. Լ. Լ. ՏՀԱՆԵՐ:
Իննըսունական թուականներուն իրա-
պաշտ վիպագրութեան հետզհետէ լայնցող
հոտանքին մէջ, ան կը յայտնուի յանկարծ
զարտուգութեան պէս բան մը, որ թողլով
Բաֆֆին, թողլով Շիրվանզադէի ուղղու-
թիւնը (որ իրը չէր, այլ ժամանակին),
դարձ մը կ'ընէ զէպի Աբովեանը, զէպի

զուտ ուսման թիվը զգալիորեն չի խա-
ղանալ հայեացքի տակ ուզուել նկատել
Ահարոնեանը, պիտի փորձուինք կարծես
ըսելու թէ Ահարոնեան վիպագիր մը չէ,
այլ բանաստեղծ մը, վշտի աշուղը, մարդ-
կային սրտի ողբերգուն։ Ինչպէս «Վէրք
Հայաստանի» իբրեւ վէպ, մանաւանդ
իբրեւ պատմական վէպ (հակառակ այդ-
պէս տիտղոսաւոր ըլլալուն հեղինակէն),
նմանապէս Ահարոնեանի բոլոր գործերը
վէպի խիստ պահանջները չեն գոհացներ։
Ահարոնեան և Արուսեան երկու հոգեղբայր-
ներ են մեր գրականութեան մէջ, օժտուած
աւելի զգացումի և յուզումի գանձովը՝
քան կըռքապատմեան և չափակցութեան
տարրերով։ Եստի՜ նաեւ համամանու-
թիւնը իրենց արտադրութեանց նկարա-
զրին։ Վէպը կը պահանջէ դէպքերու հիւ-
սուածքին՝ մէջ տեսակ մը իմաստասի-
րութիւն, իրականութեան մերձեցում և
բնականութիւն՝ ըլլալով կեանքի իրական
պատկերացումը։ Բայց երբ չի պահուի
իրականի այս հաւատարմութիւնը, այլ
երեւակայութեան սանձարձակ ազդեցու-
թեան տակ և զգացումի բուռն թափով
կը հեռացուի բնականի սահմաններէն,
այլեւս չենք մնար բուն վէպի կալուածին
մէջ, և կը մօտենանք բանաստեղծութեան։
Արուսեան յայտնուեցաւ իր գործով աւելի
բանաստեղծ մը քան վիպագիր, որովհե-
տեւ տիրականօրէն ուժեղ էին իր քով
զգացումի և երեւակայութեան բաժինը։
Նոյնը եղաւ նաեւ Ահարոնեան իր խառ-
նուածքով։ Երկուքն ալ գեղապաշտ ու
տեսապաշտ հոգիներ, ուսման թիվը զգալի-
որեն խաղանալ յայտնարեւոյ իրենց խորքին
մէջ, որոնք չափերու և կշիռի չեն գոր-
անոնց մէջ զգացումը կը յաղթէ բանին և
դատողութեան։ Ահարոնեանի գործերուն
վիպական կառուցուածքը հետեւաբար կը
հեռանայ բուն վէպի պայմաններէն, և չէ
կարելի այդ սեռին խիստ պահանջները
գտնել իր ո՛ր և է գործին մէջ։ Ամենէն ա-
ւելի վիպական կազմ ու նկարագիր ու-

նեցող Մարիկի Սարգսի անգամ չի գո-
հացներ մեզ այս տեսակէտով։ Եւ գործը
կարծէք ամբողջապէս թախիծի, տրամու-
թեան, յուստեսութեան, ճակատագրա-
պաշտութեան պատկերացում մ'է։ Հոն
գործողութիւն, դէպքերու բնական յեղա-
շրջում և զարգացում չկայ, հոն կան
առատ խորհրդածութիւններ վշտի և ճա-
կատագրի տխուր հարուածներուն շուրջ,
գեղեցիկ ու գրաւիչ նկարագրութիւններ,
սիրոյ պատրանքին աղետաբեր ողբերգու-
թիւնը, որուն զոհ են «Ասօ» և «Գապէ»,
երկու տիրական դէմքերը այդ գործին։
Բայց որովհետեւ Ահարոնեան նպատակ
ունի վէպ մը տալու, բնականաբար կը
խառնէ դէպքեր, միջադէպեր, կը ստեղծէ
գործողութիւն, սակայն ասոնք խզուած
են իր գաղափարախօսական բնահանր
մտահոգութեան տակ, և աւելի գէշ՝ կը
պարունակեն պատահականութիւններ,
յանկարծական ու անակնկալ միութիւն-
ներ, մանաւանդ գործին վերջը՝ երբ
«Ասօ» յանկարծ կը փոխուի հերոսի մը,
այն՝ որ թշուառ էակ մ'էր, անբախտ սի-
րահար՝ որ իր անհուն ցաւին մէջ ամ-
փոփուած և տրորուած, կեանքէն և ըն-
կերութենէն հեռու, ձորերու մէջ և ջա-
ղացքի մը անկիւնը իր հոգեկան երջան-
կութիւնը կը փնտէր միմիայն։ Այն
«Ասօ»ն՝ որ ամբողջ գիւղէն խենթ մը
նկատուած էր, ինչպէս յանկարծ կը գրաւէ
բոլորին համակրանքը, կը դառնայ պա-
րզուրի քրդական յարձակումները զր-
պող։ Նոյն անբնականութիւնները կը
գտնենք նաեւ Սեւ Օրեր, Ռաշիկ վիպակ-
ներուն մէջ, դէպքերու չափասուած կցոր-
դումներով, չափազանցութիւններով։ Ե-
րեւակայութեան հզօր ազդեցութեան հե-
տեւանքով է որ այդ վիպակներուն, ինչպէս
Ահարոնեանի ուրիշ գործերուն մէջ, դէպ-
քերու կապակցութիւնները մարդկայինի
և բնականի սահմանէն անդին կ'անցնին,
ու արուեստական, արկածախնդրական
բան մ'ունին՝ զիտուեալոր պատահում-

ներով անձերու, տեղւոյ, պարագաներու,
որովհետեւ հեղինակը ամէն գնով կը ձկտի
հասնիլ իր նպատակին։ Ուստի կը զգացուի
հոն յայտնի ճիգ մը մեծցնելու, չափա-
զանցելու և չափասուած տեղի իսկ պա-
տահեցնելու անձեր իրարու՝ որպէս զի
քալէ գործողութիւնը։ Վիպագիր Ահարո-
նեանի մէջ անթխակի են այս թերու-
թիւնները։ Շիրմանգապէ իր վիպական
կառուցուածքով աւելի մօտ է սեռին պա-
հանջներուն, աւելի բնական և իրական
հիւսուածքով մը դէպքերու և ամբողջու-
թեան։ Այդ թերութիւններուն փոխան սա-
կայն Ահարոնեան, անգերանգանցիկ կը
մնայ իր գրական տաղանդով, իր գունա-
գեղ նկարագրութիւններով՝ զրեթէ բոլոր
գործերուն՝ մանաւանդ Մարիկի Սարգսի-
ին մէջ։

Ահարոնեանի միւս գործերը վիպական
մեծամասշտաբ ճարտարապետութենէ զուրկ
փորձիկ պատմաւածքներ են, պատկերներ
և կամ նկարագրութիւններ, և ասոնց մէջ
ան աւելի յաջող է։ Իր Մայրեր գեղա-
րուեստական հրաշալիք մ'է, Ազնոտրեան
ճակատարին մէջ մի պատկեր՝ նոյնպէս
առնչող գեղեցիկութիւն ունի։ Խեղճերը,
և կեանքի վէպը, կ'ամփոփեն շարք մը
իր յաջողագոյն էջերէն, խառնի մէջ
վիպակը հակառակ իր փորձութեան՝
ամենէն կատարելաբար ձևով և խորքով,
ճարտարը իր երեք պատմաւածքներով և
իւր գիրքը իր գրաւիչ նկարագրութիւննե-
րով Ահարոնեանի արդէն հասուն տաղան-
դին արտադրութիւնները կը կազմեն։ Այն
կը յաջողի հոն, ուր կայ հոգեկան վի-
ճակներու վերլուծում, բնութեան նկա-
րագիր, և ուր պարտադրուած չէ հակա-
կառուցում մը տալ վիպական ճարտա-
րապետութեան մը։ որովհետեւ ան բա-
նաստեղծ է, զգացումի գերզգայուն ար-
տայայտիչ՝ որ կը սիրէ խօսիլ սրտին
հետ, գունազեղել դէմքեր ու տեսարաններ,
հում նիւթերու տալ գեղարուեստական
շնորհ ու փայլ, երբ սակայն ասոնք վի-

պակի մը, պատկերի մը և կամ պատ-
մաւածքի մը ծաւալէն անդին չեն անցնիր։
Իր ոճին հմայքը կազմող տարրը՝ ինչ-
պէս ըսինք, իր բանաստեղծի հոգին է
ամէն բանէ առաջ։ Այն կը նետէ իր
հայեացքը աշխարհի, մարդոց, բնութեան
վրայ ու ամենուրեք կը փնտէր յուզում,
խորհուրդ, բանաստեղծութիւն։ Իրերու և
մարդկային հոգոյն խորը թափանցող իր
հայեացքն է որ իր գործին կու տայ գե-
ղարուեստական բնոյթ. և իր այս ոճը՝ որ
կը սիրէ սլացիկ թեթեւութիւն, թրթռա-
ցում և քնարականութիւն, կը յայտնուի
ոչ միայն բնութեան նկարագրութիւններու
մէջ՝ այլ նաեւ հոգեկան վիճակներու,
յոյզերու, կարօտի և տագնապի նոյանները
պատկերացնելուն մէջ այնպիսի տղաւորիչ
եղանակով՝ որ մենք ընթերցողներս կը
տարուինք սիրել կամ ստեղծել գէպը մը կամ
անձ մը՝ զոր ան կը ներկայացնէ մեր
մտքին առջեւ իր մոգական արուեստովը։
Ճիգ, արուեստականութիւն չկայ այդ
պատկերացումին մէջ։ Ահարոնեան իր
հոգեւոյն խորը ունի բնութեան հմայքը,
կը զգայ ինչ որ գեղեցիկ է և առնչող.
զգալը առաջին անհրաժեշտ պայմանն է
անշուշտ, բայց նա գիտէ նաեւ նոյն զգա-
ցումը հաղորդել նոյնքան և թերեւս աւելի
ուժգնութեամբ։ Ան ուսման թիվը խորը ու-
նենալուն՝ ունի բնական բերում մը դէպի
քնարական շեշտը և բանաստեղծութիւնը,
որ ինչպէս գիտէ գմայլելի փափկութեամբ
նկարագրել յետաքրքիր, նոյնքան հոգեբա-
նական նրբութեամբ գիտէ պատկերել նաեւ
մարդը մեր զգացողութեան զիմաց։ Բնու-
թեան զգացողութիւնը տուող օրինակ մը
բերելու համար յիշենք իր շատ երկրոր-
դական վիպակներէն Սեւ Օրեր-ու սկզբնա-
ւորութիւնը, ուր այնքան յաջող կերպով
պատկերացում է բնութեան զարթոնքը
«Մարօ»-ի մէջ, բնութիւնը որ կը շրջա-
պատէ զինքը և որուն մէջ ան նետուած
է անգիտակցաբար։ Ինչքան գեղեցիկ է
նաեւ տեսարանը՝ որ պարզուած է մեր



առջև Մարիկի Սարգսի վեպին մէջ, երբ «Ասո» նստած լինի ափին, յանձնած ինքզինքը բնութեան զիւթանքին ու խաղերուն, բնութեան խաղաղութեան և զուարթութեան, որ կ'ողողէ զինքը ամէն կողմէ, ու այդ բոլորին հակադրուած անոր անհուն ցաւը, որ ծովէն աւելի խոր է. ան «Պարզ ունի, ծովի չափ դարձ»։ Ուրբան գրաւիչ են և ուժեղ նոյն գործին մէջ՝ ալեկոծութեան և փոթորիկի նկարագրութիւնները, որ միայն կը բաւեն անոր նկարագրողի վրձինին ճարտարութիւնը ապացուցենու։

Ու այս ամէնը պատմուած այնպիսի ներդաշնակ ու սահուն լեզուով մը որ իրն է, Ահարոնեանինը, աւելի կատարելագործուած, աւելի յղուած ու զրական քան Բաֆֆինը, քան Շիրվանզադէինը մանաւանդ։ Այդ լեզուին վրայ կայ զրոյշմը իր բանաստեղծի հոգիին՝ որ կու տայ անոր թեթեւաւոյց ու զրաւիչ գեղեցկութիւն. առկէ՝ իր պատկերաւոր արտայայտութիւնը, իր ճոխ ու զիւտաւոր փոխաբերութիւնները, որոնցմով կը հարստանայ և մոգիչ կը դառնայ այդ լեզուն, Օրինակ մը տալու համար յիշենք հետեւեալ հատուածները.

Նրա սեւ ու փարթամ մազերը ալիքաւոր ու քմահաճ ծալքերով փռուել էին բարձրի սպիտակութեան վրայ, ինչպէս մութ ու գալարուն ամպը լեռան ձիւնապատ կատարին։ (Մոխր-նեղի տակից)։

— Հայեացքը որի մէջ լողում էր վիշտը, որպէս նոսր ամպը երկնքի անհուն կապոյտի վրայ (անդ)։

— Այդ քնքուշ, եթերային արտածը (խօսքը խելոյ, հիւանդոտ մանկան մը վրայ է) կարծես ապրելու համար չէր եկել աշխարհ, այլ հէնց այնպէս, որ նայի ու անցնի, ինչպէս ուշ աշնանը լեռնալանջին ծլած մի մենաւոր ու գունատ ծաղիկ, որ առաջին հողմի հանդէպ թօշուտ, զլուխը քաշ է ձգում փոշիների մէջ։

— Գասպարը նախ տնքաց կրծքի խորքերից, ապա ինչպէս մի պատ փշէր, կռիւքը քանդակեց որոտով, և նա լալիս էր մերթ ինչպէս ժայռի խռոչում խեղդուած վտակ, մերթ ինչպէս քամու տակ շառաւղի կաղնի։

— Հետաւոր հորիզոնի վրայ արշալոյսը նախ քնքշօրէն զգոյշ, ապա յորձանուտ երփներանգ լոյսերի հեղեղով փռուեց, ծովագաւ ափնադարձ ու զիւթական խաղերով (խաւարի մէջ)։

— Գարձեալ գիշեր, մի մաշլ գիշեր։ Սեւ երկնքի տակ անհանգիստ քամին էր աղմկում խաւարի ծանր լսութիւնը։ (Բանտում)։

Առանց յատուկ փնտռութիւն ու և է տեղէ մը յիշատակուած այս տուրքը արդէն ցոյց կու տան ինչ քան Ահարոնեան աշխոյժ ու թեթեւ, բնարական և բանգով և հրապուրիչ սեռով մը կը պատմէ, կը յուզէ, կը ջերմացնէ սրտերը։

Ահարոնեան բնութեան բնուշ ու գոյարար իրերու նկարագրութիւնէն, կանայի գեղեցկութիւններէն, ծագիլի ու բոյրի թովչանքէն՝ զմայլելի ներութեամբ կ'անցնի կեանքի խորհրդաւոր պահերուն, կը մտնէ խորը մարդու սրտին, գայն շրջապատող երեւոյթներէն անցնելով զգացումի ճշգրիտ հայեալացումին՝ համապատասխան մարդկային սրտի հարազատ հոգեբանութեան։ Սիրոյ, ճակատագրի պատճառած յուզումները իրենց ամէնէն աւելի բնական երեսներով և բանաստեղծութեամբ կը գծագրուին. զիշերային անքնութիւնները, արշաւաւային երազները՝ ծնունդ տալու պիւր և յոյսերու, հոգեկան զինովութիւնը և դառնութեան յուսալքումները իր տիպարներուն՝ իրենց ուրոյն գոյնով և նկարագրովը այնպէս կը պատկերացունեն՝ որ մենք զիւթուած անզգալիօրէն կը քաշենք իրեն հետ անձէ անձ, զէպրէ զէպր...։

Արտաքինէն գէպի հոգեկան վիճակներու այս անցքը Ահարոնեան կը կատարէ շատ զիւրութեամբ, ու հոս կարծես թէ բուն իր մասնագիտութեան մարզին մէջն է. զիմագծի մը արտաքինը տալէն վերջ՝ թափանցիկ ներքին հոգեբանութեան, վայրկեանի տրամադրութեան, զգացումին և մտածութիւններուն, ու պատկերացնել գանոնը այնքան հարազատ և խօսուն եղանակով մը, ահա Ահարոնեանի անզուգական յաջողութիւնը։ Ան խոր հոգե-

բան է, վերլուծող և հայեալացող նորը հասկացողութեամբ մարդկային հոգւոյն բոլոր ծալքերը. անհամար են այն պատկերները որ ան գծած է հոգեկան այլեւայլ վիճակներու. իր բոլոր տիպարները մէկ մէկ անհատականութիւններ են զիւղացի կամ քաղաքացի, կոպիտ կամ ազնիւ արտաքինով. մայր, որդի, գինուոր կամ մշակ, ամէնքը ամէնքը հոն են իրենց հոգիին հարազատ պատկերով. ո՛վ չի ճանչնար Արիւնտ քրիստոսի «Գաւիթ»-ը իր տաղ-նապներուն և խղճի խայթին մէջ, կամ Սրագի «Գաւո»-ն՝ բարի, խղճամիտ ու անձնագոհ, Կարոյրը պատմուածքին «Գահ Բաշօնց Անտոն»-ը իր աղքատ հոգարարի հոգեբանութեան մէջ, ճամբարի «Սոփո» ժամկոչին պատկերը իր ողորմելի, միամտի գծերուն մէջ, խեղճուկ ու արգաստանական, որուն մէջ կ'ապրի տակաւին եսասիրութիւնը, մաղձոտ չարախնդրութիւնը, հոգեկան ամբոխումը իր երկտաւար օգնականին աւելի փայլուն ձրբերուն ի տես՝ կարծես աւելի փայլուն ձրբերուն ի տես՝ զոր չի կրնար տանիլ, և կամ Ղեղօ-ի սրտը պատմուածքին մէջ «Գէլօ»-ն՝ ախպէրի ճիգերուն նկարագրութիւնը՝ աչքը ըլլալու արտի մը, Մայրերը պատկերին մէջ «Սուսանի» տիպարը՝ որ աշխարհիս բոլոր մայրերը կ'անձնաւորէ...։

Ահարոնեանի գրականութեան վրայ կը զգացուի ազդեցութիւնը Տուրքիանի, Տուրքիանի, Մարսիմ Կորբի, և զլիսաթոյնի Անտրիէֆի, որուն հոգեբանական վերլուծումները և ոճի բնարականութիւնը՝ կը գտնենք իր բով ալ։ Ահարոնեան մեր վիպագիրներուն մէջ թերեւս միակն է որ անոնց հետ զրական եղբայրութեամբ մը միջազգայինի սահմաններուն մէջ կը մտնէ, իր ոճին հմայքովը և մանաւանդ իր զրուածքներու հոգեբանութեամբը։ Եթէ ազդաներու նկարագրութեանց զուտ պատմական մերկացնելը այս հոգեբանութիւնէն, միացածը սովորական զէպրեր են, աննշան ու հազար անգամ կրկնուած մեր արիւնով զրուած պատ-

մութեան մէջ, որոնց արձանագրութիւնը կրնար մի միայն ազգագրական տեսակետով օգտակարութիւն ունենալ։ Բայց Ահարոնեան կ'իջնէ մարդկային հոգւոյն անդունդը, կը չափէ անոր անյատակ խորութիւնները, և հայ գիւղացիի պատկերը սուտած առնէ՝ կու տայ համամարդկային սրտին կեանքը։ Իր Լուսինը, Մոխրների տակից—ը հայ գիւղական անձուկ շրջանակէն ալ դուրս կ'ելլեն իրենց նիւթով, սիրոյ և ամուսնական հարցերը կը փորձեն շօշափել, միշտ հոգեբանական թափանցումով։ — Ուրիշ գիտելի կէտ մը. գրեթէ ամէնուրեք՝ Ահարոնեան ըլլալ զիւղական, ըլլալ քաղաքացիական կեանքի պատկերը, ապրումները սուտած առնէ՝ հակում մը ունի ճակատագրապաշտութեան հարցին մօտենալու, երբ մանաւանդ ցաւի, թշուառութեան, չարի տիրապետութեան խնդիրները կու գան իր միտքը տանջելու։ Իրապէս ճակատագրապաշտ մ'է Ահարոնեան։ Այդպէս կ'երևի հարեւանցի բնուղին. սակայն եթէ ուսումնասիրենք պարզանքը, պատճառը, մանրամասնութիւնները այդ զէպրերուն, կամ եղանակը՝ որով ան կը ներկայացնէ այդ բոլորը, խնդիրը կ'առնէ ուրիշ կերպարանք։ Գրեթէ բոլոր գործերուն մէջ, բայց զլիսաթոյնի պէս Անտառը, Մայրերը, Խաւարիկ մէջ, Լուսինը, Մարիկի սարը, Ազատութեան ճակատագրի շատ մը պատմուածքներուն մէջ շեշտուած է այդ իր ճակատագրապաշտի գաղափարախօսութիւնը։ Անտառի մէջ «Աթօ» անհատ մ'է այն պատճառով՝ որ եթէ Աստուած մը կայ ինչո՞ւ չարը չի պատժուիր, ինչո՞ւ անմեղութիւնը, բարութիւնը կը կրէ, կը հալածուի։ «Աթօ» խտացած խղճմտանք մ'ունի, չարութիւնը իրեն չարութիւն փնտռող թշուառական մ'է, կը գործէ չարը սպասելով պատժուիլ երկնքէն. ան այդպէս եղած է տեսնելով որ մը իր բարի ընկերոջ Գասպարի մահը, զոհ օձի խայթութեամբին. ինքը յանցաւոր, մեղաւոր,

լազիանոսքիւն և միմիայն լազիանութիւն
գտած են անոր գործերուն մէջ. տեսակէս
մը որ չափազանցուած է ի հարկէ: Ահա-
բոնեան կու լայ, բայց աւելի կը բողբէ,
ոտքի կը հանէ զսպուած հոգիները. լա-
կանութիւնը լոկ տկարութեան և համակամ
ստրկութեան հետեւանը մը պիտի ըլլար
շատ շատ, մինչ ինքը սարսուռ կը պատցնէ
հոգիներէն ներս, կը հրաւիրէ պոյրարի,
ազատութեան տենչը կը բոցարծարէ,
կեանքի հրապոյրը կ'արթնցնէ, գաղտնա-
բական մը կը գծէ մաքերու առջեւ: Պրա-
կան, ներգործական գաղափարախօսու-
թեան մը գոյութիւնը անժխտելի է հեռու
ւարար իր ըով. ան միայն կրտսրական
արձագանգող մը չէ լոցի ու սղրի, լոկ
գուրովի երգիչ մը, այլ մանաւանդ նպա-
տակի մը ձկտող առարեալ՝ ազատութեան,
արդարութեան և ճշմարտութեան:

Հայրենիքը ամէն ինչ է իրեն համար,
ու այս ձկտումը կը կազմէ մայր-երակը
իր բոլոր զգայնութիւնները, յայտնուած
զրեթէ ամենաւերեք. հայրենի հողը, կլիման,
հայրենի տիպարները, բնութիւնը, կեան-
քը, ձիւնագագաթ «Մասիս»-ը մանաւանդ
կ'իշխեն իր վրայ և իր գործին մէջ: Ու
այս ձկտումն է որ կու տայ նաեւ զբաւիչ
գեղեցիկութիւն իր գէմքին և իր վիպական
գրականութեան: Ան անձնաւորումն էր
«ազատ ու անկտի» Հայրենիքի, իր
գործին մէջ արտայայտ հայ գիւղը, հայ
հոգին է որ կ'ապրի, և առար համար
ամէնէն հայազորող գրականութիւնն է Ա-
հարսեանիներ, ինչպէս թուամեանիներ:

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ

(Վերջ)

ՄԱՍԻՍԵՐՈՒՆ

Ի՞նչ երգերով գովքն հիւսեմ ձեր երկնասլաց կատարներուն...
Դէմքս ահա՛ կանգնած էք դուք, պահակներու պէս մշտաբովուն:
Ձեր ներաշխարհն ե՞րբ, ո՞վ ըրաւ բրնակատուն Մայր-սղրին,
Որ գիւցուց անթիւ դարեր գիւցադուներն հէքեթային...:

Երկին-երկիր ու ծիրանի ծովն երկունքով ծընունդ տըլին
Երբ հըրաբորբ աչքներով Վահագնին հետ, բոցամարմին,
Լուռ վրկաներն եղաք անոր վաղքին, ուրկէ հոյլքն աստղերուն
Բիւրեղացան երկնի վըրայ, զերթ կաթնածիր շաւիղ մ'հետուն...:

Ձեր անքրթիթ ու հըրապայր աչքերուն դէմ, առտու, իրկուն
Մընացին վառ աստուշաններն հին հեթանոս աստուածներուն,
Ու հըրաչքով մ'անոնք յետոյ չիջան յանկարծ, փոշիացան:
Ձեր թոյլատու հայեացքին տակ, ուխտով մը վեհ, յաւերժական...:

Ի՞նչ տաղերով փառքն հիւսեմ ձեր հըրաբարտ, անմերձ կատարներուն,
Ուր դարանիստ ձիւնն ըսպիտակ իր բաշերովն յարածըլուն
Կը մարտնչի կատաղօրէն, որպէսզի միշտ մընայ թաղուն
Գաղտնիքն Ութին՝ լեռնաշխարհի հեռաբրնակ ողիներուն...:

Ո՞ր բաց ճամբէն ևս յանձնուիմ կատար տանող կածաններուն,
Բարձրանամ վեր, դընեմ պըսակ ձեր ճակտին վէս, չուշանալոյն,
Ու երկրախումբ բարձունքներէ ակնարկս յատած հորիզոնին,
Նոյն խնդութեամբ ևս ողջունեմ Հայ-բընաշխարհն եղեմային...:

1945 Յուն. 23

Թ. Ա. ՀՐԱԶԴԱՆ

ԷԶՄԻԱԾՆԻ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

1655 ԹՈՒԱԿԱՆԻՆ


(Շար. թ. 3-4, էջ 68)

Բ.

Խոստովունքիս հաւատարիմ զտնուելու
համար՝ նախորդ յօդուածիս շարունակու-
թիւնը պիտի պարունակէ Դավէտիէի Ա.
Գրքին երրորդ գլխուն թարգմանութիւնը,
որմէ ընթերցողը, վերջնական ծանօթա-
ղրութիւններէս առաջ, պիտի ստանայ 1655
թուականին էջմիածնի Բուն Բարեկենդա-
նին նկարագրութիւնը, անոր Մայր Տա-
ճարին հիմնարկութեան դէմ չարամիտ
Սատանային յարուցած արդեւքներուն հը-
նաւանդ զրոյցը: Այսպէս նաեւ օձերով լի-
ցուն վերապին մէջ Ս. Գրիգոր Լուսաւոր-
չին տասնչորս տարի հրաչքով ապրիլը,
Տրդատ թագաւորին մոլեղնոտ տուփանքը,
Հովիտիմեան կոյսերուն անպարտելի դի-
մադրութիւնը և անոնց նահատակութիւ-
նը:

Բոլորն ալ Ազաթանդեղոսին պատմածէն
քիչ մը տարբեր, այլ խոկութեան մէջ մի-
եւնոյնը, զոր Դավէտիէ ճանապարհորդ
Հայ ընկերներէն լսած էր:

Նկատի առնելով հանդիսաւոր այդ օր-
ուան ներկայացումին մասնակցող բարձր-
աստիճան եկեղեցականներուն բազմութիւ-
նը, որ Հայրապետը կը շրջապատէր, անոր
հեղինակաւոր վարչութեան զօրեղ կազմա-
կերպութիւնը, տրամադրած եկամուտներն
ու դրամական միջոցները, էջմիածնի
Հայրապետութեան արդի վիճակը ասկէ ե-
րեք դար առաջուանին հետ բազդատելով,
ընթերցողը դիւրաւ պիտի համոզուի որ
Մահմետական արքաներուն տիրապետու-
թեան ներքեւ էջմիածնի հայրապետական



Պատկերութիւն «Գեղարդին», կատարուած
Դավէտիէի:

զահը աւելի նուազ կրած է և նուազա-
ցած, քան թէ քրիստոնեայ վեհապետնե-
րու և անոնց յաջորդող ժամանակամիջո-
ցին:

Անժխտելի և ցաւալի այս իրականու-
թեան յանդիման պահ մը խորհրդածելէն
յետոյ, անցնի՛նք վերոյիշեալ Գ. գլխուն,
որուն նախորդին մէջ Դավէտիէ կը պատմէ